Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Սուրեն Պապիկյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2019 թվականի նոյեմբերի 19-21-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

  ՌԴ տրանսպորտի նախարարություն

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Մասնակցություն «Տրանսպորտային շաբաթ–2019» ամենամյա միջոցառմանը

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2019թ. նոյեմբերի 16–21-ը ք. Մոսկվայում կայացել է «Տրանսպորտային շաբաթ–2019» ամենամյա միջոցառումը, որն անցկացվել է Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարարության բարձր հովանու ներքո:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է նոյեմբերի 19-ին և 20-ին կայացած միջոցառումներին, որոնք են՝

- Տրանսպորտի ոլորտը կարգավորող նախարարների, ճյուղային միությունների և ասոցիացիաների, խոշոր տեղական և արտասահմանյան տրանսպորտային ընկերությունների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ ոչ պաշտոնական հանդիպումը (նոյեմբերի 19),
- «Տրանսպորտը որպես եվրասիական ինտեգրման հիմք» լիագումար քննարկումը (նոյեմբերի 20),
- ԱՊՀ մասնակից պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության 39-րդ նիստը (նոյեմբերի 20),
- Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 3-րդ խորհրդակցությունը (նոյեմբերի 21):

«Տրանսպորտը որպես եվրասիական ինտեգրման հիմք» լիագումար քննարկումների ընթացքում ելույթներով հանդես եկան ԵԱՏՄ նախագահ Տ. Սարգսյանը, ՌԴ տրանսպորտի նախարար Եվ.Դիտրիխը, «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Վ. Բելոզյորովը, Միջազգային տրանսպորտային ֆորումի գլխավոր քարտուղար Յանգ Թ. Կիմը և այլ խոսնակներ:

«Տրանսպորտային շաբաթ–2019» միջոցառման կարևորագույն հանդիպումներից էր նաև ԱՊՀ մասնակից պետությունների համակարգող տրանսպորտային խորհրդակցության (ԱՊՀ ՀՏԽ) 39-րդ նիստը: Հանդիպման ընթացում քննարկվել են մի շարք օրակարգային հարցեր, որոնցից էին նաև Խորհրդակցության նախագահի տեղակալների ընտրությունները, որտեղ առաջադրված էր ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանի թեկնածությունը:

ԱՊՀ ՀՏԽ 39-րդ նիստին հաջորդեց Եվրասիական տնտեսական միության մասնակից պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների 3-րդ խորհրդակցությունը, որը վարում էր ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Ս.Պապիկյանը՝ հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը այս տարի Եվրասիական տնտեսական միությունում հանդիսանում է նախագահող երկիր:

ԵԱՏՄ տրանսպորտի ոլորտը կարգավորող ղեկավարների նիստի ընթացքում ներկայացվեց 2019 թ. սեպտեմբերի 30-ին Երևանում կայացած Խորհրդի 2-րդ նիստի որոշումների կատարման ընթացքը, քննարվեց 2018-2020թթ. համար նախատեսված ԵԱՏՄ-ի մասնակից պետությունների համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրականացնման հիմնական ուղղությունների և փուլերի կատարմանն ուղղված միջոցառումների («ճանապարհային քարտեզների») իրականացման ընթացքը, ռուսական կողմից ներկայացվեց Միության տրանսպորտային-տնտեսական հաշվեկշռի ներդրման վերաբերյալ առաջարկը և դրան առնչվող մանրամասն տեղեկատվությունը:

Միջոցառումների նախօրեին տեղի ունեցավ տրանսպորտի ոլորտը կարգավորող նախարարների, մասնաճյուղային միությունների և ասոցիացիաների, խոշոր տեղական և արտասահմանյան տրանսպորտային ընկերությունների, միջազգային կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ ոչ պաշտոնական հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր և նախագծեր:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Որոշվեց շարունակել ԵԱՏՄ տրանսպորտային-տնտեսական հաշվեկշռի նախապատրաստմանն ուղղված հարցի ձևավորումը՝ ԵԱՏՄ մասնակից պետությունների տրանսպորտային համալիրների համակարգված զարգացման նպատակով: Նշված ձևավորման ընթացքը ապահովելու համար ՌԴ տրանսպորտի նախարարությունը պետք է մինչև 2020թ. փետրվարի 1-ը ԵԱՏՄ ներկայացնի տրանսպորտային-տնտեսական հաշվեկշռի տեխնիկական առաջադրանքի նախնական նախագիծը՝ Տրանսպորտի և ենթակառուցվածքի խորհրդատվական կոմիտեի կողմից մշակման և քննարկման համար:

Որոշվեց ԵԱՏՄ անդամ պետությունների տրանսպորտի ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների խորհրդի հերթական նիստը անցկացնել 2020 թվականի ապրիլի 17-ին Չելյաբինսկում կայանալիք Շանհային համագործակցության կազմակերպության մասնակից պետությունների տրանսպորտի ոլորտը կարգավորող նախարարների խորհրդակցության շրջանակներում:

ԱՊՀ ՏՀՏ 39-րդ նիստի ընթացքում կայացած ընտրությունների արդյունքում Սուրեն Պապիկյանը միաձայն ընտրվեց նախագահի տեղակալի պաշտոնում: Առաջարկվեց ԱՊՀ ՏՀՏ Գործադիր կոմիտեի տասերորդ մասնաճյուղային նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետությունում՝ 2020 թվականի մայիսի վերջում, ինչը սիրով ընդունվեց Հակոբ Արշակյանի կողմից:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Սուրեն ՊԱՊԻԿՅԱՆ

25.11.2019թ.